«Շիրակի ուսուցիչների միություն» ԳԿ ՀԿ
"Shirak teachers union" SEC NGO

«Գյումրու №26 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Հետազոտական աշխատանք

Հետազոտող ուսուցչուհի՝ Աննա Խաչատրյան

Հետազոտության թեմա՝ Վահան Տերյանի կյանքը նամակներում

Ղեկավար՝ Լյուդմիլա Ներսիսյան

Գյումրի 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3-5

Գլուխ 1. Վահան Տերյանի կյանքի արտացոլումը նամակներում----------6-15

Գլուխ 2. Տղամարդկանց հասեագրած նամակները ----------16-18

Եզրակացություն----------18

Օգտագործված գրականության ցանկ----------19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Օ՜,Գանձայի քնարական երեկոներ,դուք թռցրիք Վահանի հոգին բանաստեղծական և զերզգայական ոլորտները,դուք անմահացաք նրա տաղանդի կախարդանքով, դարձաք երգ ու հեքիաթ,մաքուր սփոփանք ու բարձր արվեստ… »:

Ավ. Իսահակյան

Վահան Տերյանն այն բանաստեղծներից է, ում հետքերով կարելի է միշտ գնալ, փնտրել ու փորձել գտնել անպատասխան մնացած հարցերի պատասխաններ, կարդալ նույն ստեղծագործությունները՝ նորովի ընկալելով և նոր բացահայտումներ անելով: Տարիների փորձը ցույց է տալիս, որ աշակերտները որևէ գրողի ստեղծագործությունները ուսումնասիրելիս առանձնահատուկ հետաքրքրություն են ցուցաբերում նրա անձնական կյանքին վերաբերող նյութերին, փորձում են համացանցից կամ որևէ այլ աղբյուրից գտնել հետաքրքիր փաստեր և ներկայացնել դասընկերներին: Գրողի գրական ժառանգության անբաժան մասն են կազմում նրա նամակները, որոնք հնարավորություն են տալիս բացահայտելու արվեստագետի ստեղծագործական աշխարհի առանձնահատկությունները, ներաշխարհը՝ միաժամանակ նաև պատկերացում տալով հեղինակի անհատականության, կյանքի, գործունեության, անգամ հույզերի և ապրումների մասին: Այդ տրամաբանությամբ Վահան Տերյանի նամակներն ընթերցողին գրավում են իրենց անկեղծությամբ, բովանդակային հարստությամբ, գաղափարական և գեղարվեստական ընդհանրացումներով: Գրվածքներ, որոնցում սովորողը տեսնում է նրա ներաշխարհը, հույզերն ու ապրումները: Նամակները կարծես նրա, թե՛ գործնական և թե՛ անձնական կյանքի անբաժանելի մասն են կազմել: Նամակներում տեղ գտած անձնական բնույթի առանձին խոստովանություններն անհայտության մշուշից փրկում են գրողի կենսագրությունից դուրս մնացած շատ փաստեր, իսկ այդ ուսումնասիրությունն օգնում է ստեղծագործությունները քննել այլ տեսանկյունից՝ հետաքրքրական դարձնելով կենսագրական և բանաստեղծական նյութի յուրացումը: Այս ամենի կազմակերպված ընթացքը կնպաստի սովորողների շրջանում ինքնուրույն վերլուծական մտածողություն զարգացնելուն և եզրահանգումներ կատարելուն:

Վահան Տերյանը ծնվել է 1885թ. հունվարի 28-ին Ախալքալաքի Գանձա գյուղում՝ հոգևորականի ընտանիքում: 1897թ. մեկնում է Թիֆլիս, ուր սովորում էին այդ ժամանակ իր ավագ եղբայրները: Եղբայրների մոտ ապագա բանաստեղծը սովորում է ռուսերեն ու պատրաստվում ընդունվելու Մոսկվայի Լազարյան ճեմարան: 1899թ. Տերյանը ընդունվում է Լազարյան ճեմարան: Ավարտելուց հետո՝ 1906թ-ին, ընդունվում է Մոսկվայի համալսարան, որից կարճ ժամանակ հետո ձերբակալվում է հեղափոխական գործունեության համար ու նետվում Մոսկվայի Բուտիրկա բանտը: 1908թ. Թիֆլիսում լույս է տեսնում Տերյանի ստեղծագործությունների «Մթնշաղի անուրջներ» ժողովածուն, որը շատ ջերմ է ընդունվում թե՛ ընթերցողների, և թե՛ քննադատների կողմից: 1919թ. Տերյանը,լինելով Համառուսական Կենտրոնական Գործկոմի անդամ, առաջադրանք է ստանում մեկնել Թուրքեստան (այժմյան միջինասիական հանրապետություններ), սակայն ծանր հիվանդության պատճառով ստիպված է լինում մնալ Օրենբուրգում, որտաղ և վախճանվում է 1920թ. հունվարի 7-ին: Տերյանի կյանքի բազմաթիվ իրողություններ արտացոլվել են նրա նամականիում: Նամակներից շատերը բացահայտում են Տերյան բանաստեղծի կերպարը, տրամադրությունները, կյանքի բազմաթիվ իրողություններ: Նշված հանգամանքը հաշվի առնելով՝ առաջանում է հետևյալ հարցադրումը՝ ինչպե՞ս է գրողի նամակների քննությունը նպաստում արվեստագետի ստեղծագործական աշխարհի առանձնահատկությունների բացահայտմանը:Հարցին ճիշտ պատասխան տալու համար առաջադրել եմ հետևյալ նպատակները.

1. *աշակերտները կծանոթանան հեղինակի կյանքին և ստեղծագործությանը անմիջապես գրողից;*
2. *կկարողանան ճիշտ վերլուծել գրողի ստեղծագործությունները, հաղորդակից լինել անձնական կյանքին;*
3. *կհասկանան հեղինակի աշխարհընկալումը:*

Այս նպատակները ներառում են բոլոր անհրաժեշտ կարողունակությունները՝ մշակութային, սոցիալական, խոսքային-լեզվական, գիտելիքի, ժողովրդավարական և այլն:

ԳԼՈՒԽ 1.Վահան Տերյանի կյանքի արտացոլումը նամակներում



Ուսուցման գործընթացում բանաստեղծի նամակների ուսումնասիրումը ենթադրում է համապատասխան նախապատրաստական աշխատանքի կազմակերպում: Սովորողը պետք է նախապես ուսումնասիրի հեղինակի կենսագրությունը, կարդա թեմայի հետ առնչություն ունեցող նյութերը, նամակները և դրանցից բխող տրամադրությունների ու հոգեվիճակների արտացոլումները գտնի բանաստեղծությունների մեջ: Նամակների ուսուցումն առավել արդյունավետ և հետաքրքիր անցկացնելու համար ուսուցիչը կարող է նամակների ընթերցման և նամակ-բանաստեղծություն զուգահեռ վերլուծության միջոցով ցույց տալ գրողի ներաշխարհի, նրա հուզապրումների անմիջական ազդեցությունը ստեղծագործություններում: Շատ հարմար կլինի օգտագործել «Զրույց բանաստեղծի հետ» մեթոդը, որի ժամանակ կարելի է ունենալ մի քանի Տերյան, և յուրաքանչյուրը կնկարագրի իր Տերյան բանաստեղծին: Տերյանի նամակներն ուսումնասիրելիս շատ ընդհանրություններ ենք նկատում հեղինակի անձնական զգացումների և քնարական հերոսի հոգեկան ապրումների միջև: Գրողի նամականին ընթերցողի առջև բացում է կենսագրական բազմաթիվ ուշագրավ փաստեր: Այս իմաստով հետաքրքիր է հենց իր՝ Տերյանի դիտարկումը նամակի մասին. «Բանն այն է, որ նամակ գրելը ես համարում եմ մի զրույց, իսկ ընկերական և մտերմական զրույցի ժամանակ խոսքերը չես ընտրում, չես աշխատում խոսել տրամաբանորեն ու «խելոք», այլ զրուցում ես անբռնազբոսիկ, ազատ, առանց վախենալու և քաշվելու: Ահա թե ինչու ես ասում եմ, որ նամակը պետք է միայն այն մարդը կարդա, ում գրված է նա…»[1] : Տերյանն այնքան ազատ է իր շարադրանքում, որ թեև իր խոսքը համարում է խառն ու շփոթ, բազմագույն, բայց, միևնույն է, ուղարկում է այդ նամակները: Ուսումնասիրելով Տերյանի նամակները՝ կարելի է դրանք բաժանել երկու մասի՝ տղամարդկանց ուղղված և կանանց: Տերյանի անձնական նամակները հասցեագրված են նրա

[1] Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հատոր 4, Երևան, 1979, էջ 160:

կյանքում եղած կանանց՝ Նվարդ Թումանյանին, Անթառամ Միսկարյանին, Մարթա Միսկարյանին. . .

Այդ նամակներից յուրաքանչյուրն էլ կարելի է յուրովի մեկնաբանել, բայց մի բան հստակ է բոլորում՝ կարոտ, տխրություն ու թախիծ: Հեռավորությունն էր, որ հեղինակին բաժանում էր սիրելիներից, ովքեր նույնպես տանջվում ու սպասում էին հետադարձ պատասխանի: Ինչպես Տերյանի բանաստեղծությունները, նամակները նույնպես շատ տարբերվող են: Նա այնքան գեղեցիկ ու գեղարվեստորեն է նկարագրում յուրաքանչյուր մանրուք, անում համեմատություններ, որոնք առանձնահատուկ են դարձնում նամակները:

1.2 Կանանց ուղղված նամակներ

1. Կանանց ուղղված նամակների շարքում առանձնակի ուշադրություն են գրավում Նվարդ Թումանյանին հասցեագրված նամակները: Թեև վերջինիս հետ նամակագրությունը կարճ է տևել, բայց, այնուամենայնիվ, այդ նամակներն իրենց բովանդակությամբ ամենահարուստն են թե՛ գեղագիտական ամենատարբեր խնդիրների վերաբերյալ մեկնաբանություններով, թե՛ այլ հարցերի քննարկումներով: Նվարդին ուղղված մի նամակում Տերյանը գրում է. «Իսկ պաշտոնական կամ կիսապաշտոնական նամակագրությունից գրեթե զզվում եմ: Դրա համար ես կուզեի նամակագրության ժամանակ ինձ միանգամայն ազատ զգալ և անպատասխանատու, ինչպես ինքս իմ առջև»[2]: Այս կերպ նա ընդհանրապես պարզում է նամակի բովանդակության վերաբերյալ իր նախընտրությունը: Տերյանի նամակները միշտ չէ, որ ունեն բովանդակային միակերպություն և վերաբերում են որևէ կոնկրետ երևույթի կամ հարցի: Ավելի հաճախ նրանցում համատեղվում, իրար հաջորդում են տարբեր հարցերի վերաբերյալ դիտարկումներ: Ստացվում է այնպես, որ անձնական ապրումների, տրամադրությունների բացահայտումները հաճախ ընդմիջվում են ազգային-հասարակական հարցերի քննությամբ: Օրինակ՝ Նվարդին ուղղված մեկ այլ նամակում ցավով գրում է. «Վերջիվերջո ես սկսում եմ գալ այն եզրակացության, որ

[2] Վահան Տերյան, Երկեր, Երևան, 1989, էջ 518:

մեր հայրենիքի ցավը մեզ այնպես է մաշում, ջլատում, կեղեքում, որ մենք դառնում ենք անընդունակ ուրիշ բան հասկանալու կամ անելու: Դա մի հիվանդագին սեր է, դա մի անհաղթելի մոլություն է - դրա պրիզմայով է բացվում մեր առջև աշխարհը - այդ չափով ենք մոտենում մենք ամեն ինչի և գուցե դրա համար անզոր ենք դառնում ու մեռնում ենք վաղ»: Կարելի է նամակների ընթերցումից հետո արտասանել տվյալ թեմային մոտ մի բանաստեղծություն,որը թույլ կտա ներթափանցել բանաստեղծի հոգեկան աշխարհ և վեր հանել շատ հուզող հարցեր: Վերը նշված նամակի տրամաբանական շարունկությունը կարելի է համարել «Հայրենիքում իմ արնաներկ» բանաստեղծությունը:

Հայրենիքում իմ արնարկ
Գիշերն իջավ անլույս ու լուռ.
Այնտեղ, ուր կար այնքան սիրերգ
Եվ վարդի բույր, և սրտի հուր:
Ամեն մի միտք հիմա մի վերք,
Ամեն հայացք հատու մի սուր,
Արնոտ դիերն են համր ու մերկ
Նայում երկինք անզոր ու զուր:
Մի օր ինչ վառ ծաղկեց մոգված
Մեր նահիրյան սիրտը բեկված
Հրով որքա՜ն խորհրդավոր.
Ահա որպես ծաղիկ թեքված:
Մեր հին հոգին համր ու մոլոր,
Ա՜խ, և անզո՛ր, և անարգվա՛ծ...

Ուսումնասիրելով Նվարդին ուղղված Տերյանի նամակները, գտնելով հետաքրքիր փաստեր՝ սովորողը կբացահայտի, որ Նվարդը Տերյանի ներշնչանքն էր: Նվարդի նկատմամբ նուրբ զգացողություններն ու հուշերն ամեն անգամ նոր կյանք էին առնում, ու ծնվում էին նորանոր տողեր՝ բխած հեղինակի կարոտած սրտից. «Ես մի քանի տրիոլետ էի գրել Ձեզ համար, իմ սիրելի և լավ Նվարդ, բայց ուղղելու կարիք կա, ուստի չղրկեցի: Ուզում էի, որ «տրիոլետների մանյակ» լինի դա, բայց ամեն անգամ երբ նստում էի Ձեզ գրելու, միտս էին ընկնում այդ կիսատ մնացած տրիոլետներս և գրելու տրամադրությունս փախչում էր» :

Սրտիս հուշերը բարի են դեռ,
Եվ քո անվամբ է, անուշ Նվարդ,
Որ մայիսին այս դառն ու անվարդ
Սրտիս հուշերը բարի են դեռ:
Թեև իջնում է հոգուս վրա ստվեր
Եվ չեմ սպասում գալիքից վարդ՝
Սրտիս հուշերը բարի են դեռ
Քո քնքուշ անվամբ, անուշ Նվարդ:

1920 թ. ապրիլին ծնվեց Տերյանի առաջնեկը, ով կրում էր Նվարդի անունը: Հետագայում Նվարդ Թումանյանն իր հուշերում գրում է. «Նրա հոգին նուրբ էր ու

քնքուշ, իր Գանձայի ծաղիկների նման՝ նրբին ու զգայուն:[3] Սիրտը՝ ջերմ ու հուր, իր երկրի սարերի նման՝ կրակ ու հրաբուխ ու էդ սարերի նման էլ «լայն ու բաց», բայց միշտ մի թախծոտ տխրությամբ համակված, ինչպես իր հայրենի սարերը մշուշապատ» :[4]

2. Վահան Տերյանի կյանքում թերևս ճակատագրական է եղել Անթառամ Միսկարյանի հետ հանդիպումը: Առաջին հայացքից վերջինս լավ տպավորություն է թողել բանաստեղծի վրա, տպավորություն, որը հետագայում վերաճել է սիրո: Մինչ նամականուն անդրադառնալը՝ կարելի է հաձնարարել մի տղայի և մի աղջկա առաջին դեմքով ներկայացնել Տերյանի և Անթառամի առաջին հանդիպումը, որը հաստատ ավելի տպավորիչ կդարձնի նամակների ընթերցումը:

Տերյանի անունից. «Մոսկվա. 17 համարի տրամվայ: Իմ հայացքը սառել էր պատուհանի մոտ մեջքով կանգնած աղջկան: Ես այնքան մոտեցա նրան, որ տրամվայի ամեն մի ցնցումից նրա հյուսքերը դիպչում էին դեմքիս, և ես շոշափելիորեն զգում էի վարսերի բույրն ու փափկությունը: «Հաջորդ կանգառը՝ Հայկական եկեղեցի»,_ լսվեց տոմսավաճառի անկիրք ձայնը: Մենք երկուսով մտանք եկեղեցու բակ: Շուտով պարզվեց, որ աղջիկը հայուհի է, անունը Անթառամ է և գործարանատեր Մնացական Միսկարյանի ավագ դուստրն է, որը Ցարիցինից Մոսկվա էր եկել եղբորն այցելելու: Պարզվեց նաև, որ եղբայրը իմ ուսանողական ընկերն է: Մեր մեջ անմիջապես ինչ-որ անորսալի, նոր բռնկվող հրդեհի առաջին տարտամ կրակն էր ծնվում: Բայց Անթառամը ընդամենը մի քանի օրով էր Մոսկվա եկել»:

Անթառամ Մնացի Միսկարյան, 1909 թ.

Անթառամի անունից. «1908թ աշնանը, երբ նախքան դասընթացներն ընդունվելս եղբորս հյուր եղա Մոսկվա, մի անգամ Կոլյա Վարագովի՝ Դավթի ճեմարանական դասընկերոջ հետ Տվերսկայա փողոցով գնում էինք Ելիսեևի խանութի մոտի տրամվայի կանգառը: Այն րոպեին, երբ բարձրանում էինք տրամվայի աստիճանին, Վահանը տեսավ Կոլյային և իմ երկար հյուսերը: Չգիտեմ, նա հասցրե՞լ էր մի ուրիշ բան ասել, բայց լսեցի , որ Վահանն

[3] Վահան Տերյան, Երկեր, Երևան, 1989, էջ 537:
[4] Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1964, էջ 67:

ասաց. «Սիրտս ուզում է այդ հյուսը կտրել»: Կոլյան, թե՝ «Ի՞նչ ես ասում: Ախր սա Դավիթ Միսկարյանի քույրն է»: Ես առաջ անցա, իսկ նրանք մնացին տրամվայի վերջին հարթակում: Երբ տրամվայից իջանք, Կոլյան ինձ ծանոթացրեց Վահանի հետ: Իսկ ցած իջանք Մյասնիցկայա փողոցում, քանի որ գնում էինք հայկական եկեղեցի: Պարզվեց, որ Վահանն էլ էր գնում եկեղեցի: Օրը կիրակի էր: Եկեղեցու մոտ շատ ժողովուրդ կար: Ես եկեղեցի մտա երգչախմբին լսելու, իսկ Կոլյան ու Վահանը մնացին բակում, ինչպես այն ժամանակ ասում էին՝ «հարսնացու տեսնելու»:

«Հենց ուզում էի Անտյային առաջարկություն անել, մեկնեց», – գրում է Տերյանը: Անտյա, Անտենկա, սրանից հետո պոետը միայն այսպիսի փաղաքուշ անուններով կկոչի իր Անթառամին:

Անթառամի հետ հաճելի հանդիպումն ու ծանոթությունը լավ բարեկամության հիմք են դառնում՝ սկզբնավորելով նրանց երկարատև, հետզհետե մտերմացող նամակագրությունը: Իր սիրելի Անետային ուղղված նամակներից մեկում Տերյանը գրում է. «…Առաջին տպավորությունն ինձ համար ունի եթե ոչ վճռական, ապա, համենայն դեպս, հսկայական նշանակություն: Չեմ կարող ձեզ հետ համաձայնել, որ մեծ մասամբ պատահական հանդիպումներն ու ծանոթություններն են «հաճելի լինում»[5]: Հաճախ Անթառամին ուղղված նամակներից բառացի տողեր կարելի է տեսնել գրողի բանաստեղծություններում: Սա նշանակում է, որ Անթառամը Տերյանի համար սրտակից ընկեր է եղել, ում հետ զրուցելիս պոետն անկեղծացել է իր տրտմության, թախծի, թաքուն երազների, անձնական ապրումների մասին: «Ինչ-որ անտարբեր վիճակ է: Առանձնապես ոչ մի բան չեմ ուզում: Կամազրկություն է: Է՜հ, Անտյա, ճշմարիտ, ինքս էլ չգիտեմ, այս ինչ է կատարվում ինձ հետ: Միայն մի բան եմ ուզում՝ պառկել, պառկել անվերջ, անվերջ պառկել ու նայել առաստաղին: Աննպատակ պառկել: Աննպատակ պառկել: Մոռանալ ամեն ինչ, ամեն ինչ մոռանալ և ոչինչ ու ոչ ոքի մասին չմտածել: Իմ մասին էլ չմտածել՝ հանգստանա՛լ» [6]:

[5] Վահան Տերյան, Նամակներ, Երևան, 1972, էջ 61:
[6] Վահան Տերյան, Նամակներ, Երևան, 1972, էջ 95:

Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ,
Ամենին մոռանալ.
Չըսիրել, չըխորհել, չափս՛ոսալ —
Հեռանա՛լ...
Այս տանջող, այս ճնշող ցավի մեջ,
Գիշերում այս անշող
Արդյոք կա՞ իրիկվա մոռացման,
Մոռացման ոսկե շող...

Մի վայրկյան ամենից հեռանալ,
Ամենին մոռանալ.—
Խավարում, ցավերում քարանալ
Մեն-միայն...
Մոռանալ, մոռանալ ամեն ինչ,
Ամենին մոռանա՛լ...

Չըսիրել, չըտենչալ, չըկանչել,
Հեռանալ...

Անթառամին ուղղված նամակները անթիվ են: 1913թ-ին գրված մի նամակում Տերյանը գրում է. «Երբեմն մտքումս հորինում եմ մի ողջ պոեմ, մի շարք բանաստեղծություններ կամ պատմվածք, իսկ գրել ծուլանում եմ: Միտքս արագ է… իսկ գրելը երկար է տևում, և ծուլանում եմ»:

Այնուհետև Անթառամին հասցեագրված նամակներում կհայտնվի մի նոր հետաքրքիր հասցե՝ Մոսկվա, Տրյոխպրուդնի նրբանցք, բն. 19՝ Սուսաննա Պախալովային:

3. Սուսաննա Պախալովա: Այս կինը դարձավ Տերյանի ճակատագիրը, նա փոխեց Տերյանի կյանքը կտրուկ և անդառնալիորեն: Սուսաննան այնպիսի հմտությամբ սողոսկեց Տերյանի ու Անթառամի հարաբերությունների մեջ, որ մարդկային սերը սեռային սիրուց գերադասող տղամարդն անգամ դա չնկատեց: Սուսաննան ամեն ինչ արեց Վահանի հետ ամուսնանալու համար: Անգամ ստեց, թե երեխայի է սպասում: Եվ Տերյանը ստիպված եղավ ամուսնանալ: Դա 1911թ. փետրվարն էր: Իսկ ամուսնությունից մի քանի օր անց Վահանը Անթառամին գրեց. «Մի բարկացեք, սիրելի Անտենկա, որ երկար ժամանակ Ձեզ չէի գրում: Բանն այն է, որ ես ամուսնացել եմ: Բայց Ձեզ տեսնելու ցանկությունս հիմա պակաս չէ: Հավատացնում եմ, որ շատ կուզենայի ձեզ տեսնել»: Անթառամ Միսկարյանը գործեց Տերյանի զենքով. «Ես նույնպես ամուսնանում եմ: Արդեն քանի տարի է՝ Վլադիմիր Մորոզովը սիրահետում է ինձ: Ես նրան անվերջ մերժել եմ, իսկ հիմա տալիս եմ համաձայնությունս»: Այս վճռորոշ նամակներից հետո նրանց հեռակա կապը չընդհատվեց, հակառակը,

նամակագրությունը դարձավ ավելի զգացական, սիրային, կրքոտ: 1909 թ. Անթառամին հասցեագրված մի նամակում կարդում ենք. «Ամենից առաջ շնորհավորում եմ ձեր նշանդրեքը և հղում եմ ձեզ լավագույն ցանկություններս այդ առթիվ, թեև չեմ հավատում, որ իրոք նշանվել եք: Բայց ասում են, խելացի մարդիկ ոչ մի բանի վրա չպիտի զարմանան այս պաղ լուսնի ներքո, որովհետև ոչ մի անհնարին բան չկա այս աշխարհում»: Անձնական կյանքի իր երջանկությունը բանաստեղծը փորձում էր գտնել արվեստում:

Եվ կյանքս բոլոր մի երկարատև
Նինջ թվաց հոգուս, մի քաղցր երազ,
Նրբին մի համբույր հեռու օրերում,
Մանկական մի երգ, որ չունի անուն…

Ճակատագիրը Տերյանի տաղանդի հարցում շռայլ էր գտնվել, սակայն անձնական կյանքում նա դժբախտ էր: Սուսաննայի և Տերյանի համատեղ կյանքը չստացվեց: Թեև Անթառամն էլ էր ամուսնացել, բայց Տերյանը շարունակում էր վերջինիս հետ նամակագրությունը. նրանք դեռ հույսեր ունեին: Տերյանը հասկացավ, որ Սուսաննան չէր կարող թռիչք տալ իրեն, և որ Անթառամի կարիքը խեղդում էր: Միաժամանակ երկու կին ներկա էին Տերյանի կյանքում: Նրանք չէին խանգարում պոետին, այլ, կարծես, լրացնում էին մեկը մյուսին: Նա ներդաշնակություն էր փնտրում: Իր կողքին ունենալով կին-կիրք՝ Սուսաննային՝ նա հոգեկան խաղաղության կարիք ուներ: Դրա համար էլ չկարողացավ թողնել Անտենկային: Թեկուզ միայն նամակագրությունը նրա կյանքը լցնում էր անասելի հմայքով և ջերմությամբ: «Սարսափելի է մենակ մնալը, ես փախչում եմ առանձնությունից ու մենությունից, որոնք այնպես սիրում եմ տրտմության րոպեին: Դա սարսափելի թախիծ էր: Դուք հասկանում եք, ինչ բան է Թախիծը: Անառիթ, անել, խոր, ծանր Թախիծը: Դուք հասկանո՞ւմ եք: Դա գրեթե ֆիզիկական ցավ է պատճառում: Հասկանո՞ւմ եք, նա ամենուր է՝ իմ մեջ, իմ շուրջը, իմ վերև, ամենուր»:

Դառնություն է լցված ու թախիծ
Քեզ օտար պոետի երգերում,—
Ո՞ր կողմից եկար դու, որտեղի՞ց
Նետեցիր քո նետերն իմ հեռուն:

Մթամած օրերիս տանջանքում
Արեգակ տենչացի, և ահա,
Քո խավարն է փռված իմ հոգում,
Քո զգվանքը, և՛ չար, և՛ ագահ...

Ճչում եմ՝ հեռացի՛ր, բայց արդեն
Քմծիծաղն է ծաղկում քո դեմքին.
Ո՞վ ես դու, որ անզոր եմ քո դեմ
Եվ գերի դիվային քո կամքին...

Դառնություն է լցված և թախիծ
Քեզ օտար պոետի երգերում.—
Ո՞ր կողմից դու եկար, որտեղի՞ց
Նետեցիր քո նետերն իմ հեռուն...

Անթառամի հետ ունեցած նամակագրության մասին Սուսաննա Պախալովան տեղյակ էր: Անգամ հաճախ ստիպում էր ամուսնուն բացել փակված ծրարները և ավելացնել իր բարևները Անթառամին: Խորամանկ և խելացի կին: Բայց տիկին Պախալովա-Տերյանը հիվանդացավ, և ինտրիգը շարունակելու համար նրա ուժերն այլևս չէին բավականացնում: Հետո 1916-ին առաջին երեխայի մահը մոռացնել տվեց ամեն բան: 1918-ին Սուսաննան երկրորդ երեխան ունեցավ: Շուտով նա ամուսնուն մենակ թողեց Մոսկվայում և մեկնեց Ստավրոպոլ: 1918-ին Տերյանը ծրագրում է Ստավրոպոլ գնալ, բայց քաղաքական իրադրության պատճառով ծրագիրը խափանվում է: Սուսաննային է առաջարկում Մոսկվա անցնել, բայց Սուսաննան մերժում է: Սուսաննան հոգնել էր, հիվանդ էր: Լյասկայի (երկրորդ երեխայի անունն է) մահը վերջնականապես տապալել էր նրան: Տերյանը մնաց մենակ, մենակ ու մոլորված: Իր կյանքում ամեն ինչ խառնվել էր իրար՝ թոքախտը, քաղաքականությունը, ուրիշի հետ ամուսնացած Անթառամի կարոտը, փոքրիկների մահը, բանաստեղծությունները, հացի խնդիրը, Սուսաննան… Սուսաննայի հետ բաժանումից հետո Տերյանն ամուսնացավ Անահիտ Շահիջանյանի հետ, ով բանաստեղծի կողքին եղավ նրա ծանր հիվանդության ժամանակ և ժառանգ պարգևեց: Սակայն Տերյանը երբեք չմոռացավ Անթառամին: Մահվան մահճում նրա շուրթերը շարունակ Անթառամի անունն էին տալիս, թեպետ կողքին էր Անահիտը: Ամփոփելով Տերյանի նամակների ուսումնասիրումը՝ պարտադիր պետք է անդրադառնալ նրա կյանքի վերջին շրջանին ,որի մասին թախիծով է հիշում կինը՝Անահիտ Շահիջանյանը: 1919 թվականի նոյեմբերին Սամարայում գրում է իր վերջին բանաստեղծությունը.

Գինով եմ, գինով եմ ես էլ,
Թեթև եմ, անհոգ, լեզվանի.
Օրորիր մեզ, պանդոկ-կարուսել,
Օրորիր, օրորիր մեզ,գինի:

Պոետ մի անտեր ու անտուն,
Գիտեմ ես՝կորա՛ծ եմ, կորա՛ծ .
Բայց դեռ երգն իմ երգում է տենդում-
Օ, երա՛զ է, երա՛զ, ու երա՛զ...

Ինչ քա՛ղցր է նստել այստեղ,
Ժպտալ քո խոսքին սեթևեթ...
Իսկ ներսում իմ ,ներսում մի ասեղ
Ասղտում է-ննջե՛լ առհավետ...

Պարում են, երգում վետերում,
Սահում ենք եթեր առ եթեր.
Գուցե վաղն իսկ կարդաս թերթերում
Եվ ժպտաս՝« հանգաւ ի տեր»...

Նոյեմբերի 22-ին Սամարայից ռազմասանիտարական գնացքով մեկնում են Օրենբուրգ: Դեկտեմբերի 13-ին գնացքը կանգ է առնում Օրենբուրգից 9 կմ հեռավորության վրա, մնում են մինչեւ 18-ը: «Դեկտեմբերի 19-ին ես գնացի Օրենբուրգ, - շարունակում է Ա. Շահինջանյանը, - որպեսզի սկսեմ դես ու դեն ընկնել՝ մի ուրիշ գնացք նստելու համար: Ամեն ինչ կարգավորվեց. մյուս օրը պետք է մեկնեինք, բայց ջերմությունը բարձրացավ մինչեւ 40.8: Ես դուրս էի եկել: Վերադարձա, նա արդեն ինձ նամակ էր գրում՝ կարծելով, որ կմեռնի մինչև իմ վերադարձը: Ես արդեն տեսա, որ շարունակել ճանապարհն անկարելի է, առաջարկեցի գնալ Օրենբուրգ՝ իմ ծանոթ Օհանյանների մոտ: Նա այդ օրն առանց ինձ այնքան էր տանջվել, որ ասաց. «Ինչ ուզում ես արա, միայն ինձ մահից փրկիր»: … Օրենբուրգ մենք գնացինք սահնակով: Երբ հասանք, նա համարյա անզգա էր, սակայն տնային հարմարավետ պայմանները, ընտանիքի ջերմությունը նրան վերակենդանացրին: Նա աշխուժացավ, և երեկոյան բոլորս նստել թեյում, պարզ ու սիրալիր խոսակցում էինք: Դեկտեմբերի 20-ի օրը մինչև երեկո նա իրեն լավ էր զգում: Սենյակում դաշնամուր էր դրված: Ստիպեց ինձ ամբողջ օրը նվագել: Դեկտեմբերի 21-ին անկողին ընկավ և այլևս վեր չկացավ: Դեկտեմբերի 30-ից պարբերաբար, օրընդմեջ, նրան սկսեց այցելել մի ուրիշ բժիշկ: Ջերմությունը ցածր էր՝ 35.6 աստիճան: Աղիքների պրոցեսի հետևանքով նա ոչինչ ուտել չէր կարողանում: Անգամ անկողնում չէր կարողանում շարժվել: Հունվարի 4-ից մարմինը սկսեց սառչել: Հունվարի 6-ին առբաժնի միջոցով կոնսուլիում հրավիրվեց՝ երեք բժշկից բաղկացած: Ասացին, որ ոչինչ անել չի կարելի, ամեն րոպե պետք է սպասել վախճանին: Ամբողջ գիշեր՝ հունվարի 6, լույս 7, նա չքնեց բնավ: Մի քանի անգամ խնդրեց շորերը հագցնել, նստեցնել բազկաթոռին, սակայն այնպես թույլ էր, այնքան ուժասպառ ու հյուծված, որ միանվագ հինգ րոպե անգամ չէր կարողանում նստել: Ոտքերն ու ձեռքերն արդեն փայտացել էին, խնդրեց տրորել: Զարմանալի կերպով հանգիստ էր նա այդ միջոցին: Արցունքները գլոր-գլոր թափվում էին իմ աչքերից: Տեսնելով այդ՝

Վահանը խնդրեց լաց չլինել և ապա հարցրեց. «Ի՞նչ ես կարծում, ու՞մ է դժվար՝ նրան՝ ով մեռնո՞ւմ է, թե՞ մերձավորներին, որ կենդանի են մնում…»: Մարմինը բոլորովին սառեց: Ոչինչ չէր կարողանում ընդունել, դժվարությամբ էր խոսում… Չնայած այդ բոլորին՝ անվերջ ասում էր. «Գնանք, շուտով Մոսկվա գնանք…»:Առավոտյան գնացի բուժակի հետևից: Սրսկման միջոցին Վահանը խոսում էր և հարցրեց. «Հնարավո՞ր է, արդյոք, անվերջ ծակոցներ անել և կյանքը երկարացնել ևս մի շաբաթ»: Կամֆորայի սրսկումից հետո շուրջ երկու ժամ նա գիտակցում էր: Նկատելի աշխուժացավ, ասես գերբնական մի զվարթություն եկավ վրան, ու ցավերը մեղմացան: Ապա ինձ խնդրեց մոտը հանգիստ նստել, լաց չլինել ու չհեռանալ: Հանդարտ նստեցի կողքին, ինքը խաղաղ ու անդորր պառկեց: Թափառող հայացքով ինչ-որ բան էր փնտրում օդի մեջ. վերջին պահին կիսով չափ բարձրացավ և «Ու՞ր է իմ պորտֆելը, ես ընկնում եմ», - ասաց ու փակեց աչքերը»:

Իմ գերեզմանին դուք չմոտենաք,
Հարկավոր չէ ինձ ոչ ծաղիկ, ոչ սուգ,
Հանկարծ կզարթնի ջերմ լալու
փափագ,
Սիրտս չի գտնի ոչ մի արտասուք:
Իմ գերեզմանը թող լինի հեռվում,
Ուր մահացել են շշուկ, երգ ու ձայն.
Թող շուրջս փռվի անանց լռություն,
Թող ինձ չրհիշեն, թող ինձ մոռանան:
Իմ գերեզմանին դուք չրմոտենաք,
Թողեք, որ հանգչի իմ սիրտը հոգնած,
Թողեք, որ լինեմ հեռավոր, մենակ.-
Չրզգամ որ կա սեր եւ ցնո՛ղք ու լա՛ց:

ԳԼՈՒԽ 2. Տղամարդկանց հասցեագրված նամակներ

Ինչպես վերևում նշվեց,Վահան Տերյանը նամակներ է գրել ոչ միայն իր կյանքում մեծ տեղ գրաված կանանց,այլև բազում նամակներ ունի գրված իր համար շատ թանկ տղամարդկանց՝ եղբորը՝ Ջավախեցուն, Հ.Թումանյանին, Վ.Բրյուսովին, Օ. Օհանջանյա-նին, Ց. Խանզադյանին և այլոց: Այս նամակներում արտացոլված են բանաստեղծի ծրագրերն ու ստեղծագործական քայլերը, հիասթափություններն ու մտորումները: Բանաստեղծի հոգեկան մտորումները հասկանալու և մեկնաբանելու համար կարելի է հանձնարարել աշակերտներին գրել նամակներ Տերյանին, որոնց մեջ կլինեն նաև հարցադրումներ: Կարելի է քննարկման ժամանակ կիրառել «Ապագայի անիվ» մեթոդը՝ հասկանալու համար ինչ կար անցյալում Տերյանի կյանքում և ինչպես փոխվեց նրա կյանքը ապագայում: Նշեմ մի քանի նամակներ՝ ուղղված վերը նշված հայտնի մարդկանց:

1. 1913թ. օգոստոսին 29-ին Գանձայից Օնիկ Օհանջանյանին գրած նամակից. «... Եվ թախիծը .. Հենց որ իջնում է մթնշաղը, գյուղը լռում է, իջնում է իրոք գերեզմանային լռություն, որը երբեմն խախտվում է նաև շների հաչոցով: Թվում է, թե գերեզմանոցում ես ապրում: Ահա հենց այդ ժամանակ է, որ անտանելի ծանր է լինում, և հոգիդ պարուրում է ճմլող, կուրծքդ ցավելու աստիճանի սեղմող թախիծը: Եվ թվում է՝ գիշերը վերջ չունի: Լույսի, որևէ ձայնի խելահեղ տենչը համակում է քեզ, և վախենում ես սեփական ձայնիցդ: Թախի՜ծ: Անդրշիրիմյան լռություն: Անվախճան գիշեր... Ի՜նչ կտայի մի անսպասելի մտերմիկ ողջույնի, հարազատ ձայնի մի հնչյունի համար... Դու երջանիկ ես, Օնի', դու քույր ունես, քո կողքին մարդ կա, որին կարող ես վստահել խոհերդ ու անուրջներդ: Քաղցր է ունենալ մի մարդ, որը կարող է հասկանալ քեզ, որի կրծքին ազատորեն կարող ես լալ կյանքիդ, չիրականացած երազներիդ, մոլորություններիդ ու հույսերիդ ողջ դառնությունը: Դու հրաշալի մայր ունես: Ես էլ մայր ունեի, և նա ինձ կհասկանար, եթե ոչ գլխով, ապա սրտով...»:

2. Մայիսին գրում է Ց. Խանզադյանին, որ պահանջել են երեք առարկայից ևս քննություն հանձնել՝ դիպլոմ ստանալու համար, որոնց ինքը պատրաստված չի եղել, ուստի հրաժարվել է և հետաձգել. «Հոգիս ծայրեծայր լիքն է պոեզիայով, պետք է գրել, քանի գրվում է, քանի հոգում պոեզիայի կրակ կա, քանի վերջնականապես չենք կոշտացել կենսական գռեհիկ հոգսերից ու նողկալիությունից: Ազատություն եմ

ուզում տալ հոգուս և խոյանքներիս, որոնք այնքան երկար ժամանակ «հալածված ու ճնշված են եղել»:

3. Հուլիսի 9-ին շտապ մեկնում է Ստավրոպոլ: Գրում է Ցոլակին. «Այս վերջերս վրաս, չգիտեմ ինչու, գրելու հավաս է եկել, և օրը մի քանի բան թխում եմ- ի՞նչ է, ի՞նչ չէ, ինքս էլ չգիտեմ դեռ, հետո կտեսնեմ, իսկ առայժմ գրվում է, ես էլ գրում եմ… Բայց տպելու մասին դեռ չեմ մտածում: Մի լավ պոեմ եմ մտածել, բայց ժամանակ չկա. դրա համար շատ ժամանակ է պետք. ոտանավորը կարճ է, քիչ ժամանակ է պահանջում». Հոկտեմբերին գրում է. «Երեք շաբաթ է Պետերբուրգում եմ: Եղա Մառի մոտ –ստիպեց մտնել համալսարան»: Հոկտեմբերից Տերյանը Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետի ուսանող է՝ ամսական 50 ռ. թոշակով: Զբաղվում է հայոց և արևելյան լեզուների ուսումնասիրությամբ՝ աշակերտելով Նիկողայոս Մառին:

4. Նոյեմբերին հեռագիր է ուղարկում Հովհ. Թումանյանին. «Հիվանդ եմ, նյութապես ծայրահեղ դժվարին վիճակում. խնդրում եմ, եթե հնարավոր է, ճարեցեք փոխարինաբար 150 ռուբլի: Հուսով եմ ինձ կպաշտպանեք ստորացումներից, ավելորդ խոսակցությունից: Ընդունում եմ նյութական բնույթի ամեն պայման: Սպասում եմ շուտափույթ հեռագրական պատասխանի»: Դեկտեմբերի 11-ին Թումանյանին գրած նամակում շնորհակալություն է հայտնում փողը ստանալու և Հայ գրողների ընկերության՝ իրեն նվիրած նոյեմբերի 28-ի հերթական երեկույթում Թումանյանի ջերմ պաշտպանության առիթով: Գրում է «Մի՞թե վերջին պոետն եմ ես» բանաստեղծությունը:

Մի՞թե վերջին պոետն եմ ես,
Վերջին երգիչն իմ երկրի,
Մա՞ն է արդյոք, թե նի՞նջը քեզ
Պատել, պայծառ Նաիրի:
Վտարանդի, երկրում աղոտ,
Լուսեղ, քեզ եմ երազում,
Եվ հնչում է, որպես աղոթք
Արքայական քո լեզուն:

Հնչում է միշտ խոր ու պայծառ,
Եվ խոցում է, և այրում,
Արդյոք բոցե վարդե՞րդ են վառ,
Թե՞ վերքերն իմ հրահրուն:
Ահով ահա կանչում եմ քեզ
Ցոլա, ցնորք Նաիրի՛, —
Մի՞թե վերջին պոետն եմ ես,
Վերջին երգիչն իմ երկրի...

Հունվարի 18-ին Երևանի քաղաքային ակումբի սրահում Տերյանը «Հայոց նոր շրջանի բանաստեղծության ոճի ու լեզվի զարգացման մասին» թեմայով դասախոսություն է կարդում: Երեկոյի վերջում արտասանում է «Հրաժեշտի գազելը»: «Ամեն վայրկյան սիրով տրտում ասում եմ ես մնաս բարով…»:

Փետերվարի 7-ին ընդունվում է Սուխումի Կոշկույի առողջարան՝ թոքախտից բուժվելու նպատակով: Փետրվարի 11-ին նամակներ է գրում Մարգարիտա Շահխաթունուն, Ց. Խանզադյանին, Նվ. Թումանյանին, Կ. Միքայելյանին, որտեղ գանգատվում է իր վատ տրամադրությունից և ֆիզիկական վիճակից, նաև անդրադառնում է գրական խնդիրներին. Ստ. Զորյանին խնդրում է, որ «Մշակի» համարներն իրեն ուղարկվեն առողջարանի հասցեով:

Եվ այսպես, 1920թ-ին՝ հունվարյան ցրտաշունչ մի օր, սակավաթիվ մարդկանց ուղեկցությամբ, տխուր լռությամբ օրենբուրգյան սառը հողին են հանձնում Տերյանին…

Եվ միայն մարտ ամսի սկզբներին «Մշակն» իր «Վերջին տեղեկություններ» բաժնում տպագրում է. «Հաստատ աղբյուրից հաղորդում են, թե բանաստեղծ Վահան Տերյանը վախճանվել է»:

Ամեն վայրկյան սիրով տրտում ասում եմ ես մնաս բարով.
Բորբ արևին իմ բոց սրտում ասում եմ ես մնաս բարով:
Մնաք բարով, ասում եմ ես, բոլոր մարդկանց չար ու բարի,
Տանջվող ու որբ Ադամորդուն ասում եմ ես մնաս բարով:
Մնաք բարով, ասում եմ ես, ընկերներիս մոտ ու հեռու,
Ոսխներիս չար ու արթուն ասում եմ ես մնաք բարով:
Երկնի մովին, կանաչ ծովին, անտառներին խոր ու մթին,
Գարնան ամպին լույս ոլորտում ասում եմ ես մնաք բարով:
Ոսկեշղթա իմ հուշերին, իմ գիշերին, իմ փշերին,
Արտույտներին ոսկի արտում ասում եմ ես մնաք բարով:
Ծաղիկներին դեռ չբացված, դեռ չկիզված հոգիներին,
Մանուկներին վառ-խլրտուն ասում եմ ես մնաք բարով:
Գնում եմ ես մի մութ աշխարհ, հեռու երկիր, էլ չեմ գալու,
Բարի հիշեք ինձ ձեր սրտում, մնա՛ք բարով, մնա՛ք բարով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վահան Տերյանի նամականու քննությունը բերում է հետևյալ եզրահանգմանը. Տերյանը տխրության ու թախծի պոետն է: Դա վառ արտահայտված է ոչ միայն նրա բանաստեղծություններում, այլ նաև նամակներում:

1. Նամականին օգնում է ճանաչելու բանաստեղծի մարդկային կերպարը, աշխարհայացքը, մտածողությունը, բացահայտում է այն սկզբունքներն ու դիրքորոշումները, որոնցով ղեկավարվում է գրողը մարդկային հարաբերություններում:
2. Նամակներն օգնում են առավել ճշգրտորեն գնահատելու ոչ միայն նրա տարբեր ստեղծագործության բազմաթիվ կողմեր, այլև տեսանելի են դարձնում ստեղծագործողի կյանքի իրողությունները:
3. Տերյանի նամակների ընթերցումը գաղափար է տալիս նաև բանաստեղծի անձնային հատկանիշների, անմնացորդ սիրո ու կարոտի մասին:
4. Որոշ նամակներից պարզ է դառնում, որ դեռևս 1917թ-ին նա գիտակցում էր ,որ կյանքի վերջին օրերն է ապրում: «Ղազար ջան, ցավ չէ մեռնելը, բայց այսպիսի ժամանակ մեռնելը կրկնակի մահ է… Դեռ ինչքա՞ն գործ կա անելու… Սու՛տ է: Ղազա՛ր ջան, սո՛ւտ. խաբում են ինձ բոլորը… Ցավս է մենակ, որ չի խաբում, խեղդում է»:
5. Գրողի նամակների ուշադիր քննությունը բացահայտում է պոետի խառնվածքը, աշխարհայացքը, հուզաշխարհը և վեր հանում նրա հոգու տագնապները: Նամակների ուսումնասիրությունն ավարտելուց հետո ուսուցիչը կարող է եզրահանգումներ անել՝ կապված բանաստեծի քնարական հերոսի և հեղինակի անձնական ապրումների հետ: Վահան Տերյանի՝ խորապես սիրային հագեցվածություն ունեցող բանաստեղծությունները կենսական ակունքներ ունեն: Մեկը մյուսի հետևից ստեղծված նրբանուրբ երգերը դարման դարձան սիրելիին չհասած բանաստեղծի կսկծացող սրտին՝ ստեղծելով երազային պատրանք:
6. Այսպիսով կարողացանք տեսնել Վ. Տերյանին նաև այս կողմից՝ առանց հանգավորված կամ էլ չափածո տողերի, որոնք իրենց մեջ մի օվկիանոս կարոտ, սեր ու տխրություն են պարունակում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Վահան Տերյան, Երկեր, Երևան, 1989 :
2. Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1964:
3. Վահան Տերյան, Նամակներ, Երևան, 1972:
4. Նինա Հարությունյան, Կանայք Տերյանի կյանքում, Երևան, 2005:
5. Վահան Տերյան, Նամակներ, Երևան, 1972:
6. https://m.mamul.am/am/post/70711
7. https://blog.168.am/blog/243150.html
8. https://lili-mardastco.blogspot.com/2013/06/blog-post.html